ԼԵՎՈՆ ՄԵԾԱԳՈՐԾԻ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ Զ ՍՍԵՑՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1203-1219 ԹԹ.)

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր - Հովհաննես, Լևոն Մեծագործ, կաթողիկոս, պետություն, պատմություն, պատմիչ, եկեղեցի, քաղաքականություն, ընտրություն, հարաբերություն, եպիսկոպոս, արքա:

Հայ եկեղեցու պատմության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում Լևոն Մեծագործի եկեղեցական քաղաքականությունը: Հատկապես հետաքրքիր է հայոց արքայի և Հովհաննես Զ Սսեցու հարաբերությունների պատմությունը, որը մինչև օրս բավարար չափով չի հետազոտվել: Փորձենք լրացնել այդ առումով եղած բացը:

Կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատը մահացավ 1203 թ., որով ավարտվեց Պահլավունիների տան աթոռակալությունը: Թափուր մնացած կաթողիկոսական աթոռի երկու հիմնական թեկնածուներ կային՝ Հովհաննես Սսեցին, ով արտահայտում էր Կիլիկիայի հոգևորականության շահերը և հանդիսանում էր Լամբրոնի իշխան՝ Հեթումի հորեղբոր տղան և Սեբաստիայի Անանիա արքեպիսկոպոսը: Տեղի ունեցավ նոր կաթողիկոսական ընտրություն:

Այս մասին պատմիչ Հովհաննես Սեբաստացին գրում է. «Յայնժամ ժողովեալ Լևոնի զեպիսկոպոսունս ազգիս մերոյ՝ խորհուրդ արար վասն ընտրութեան նոր կաթողիկոսի. կէաք ասէին ընտրել զԱնանիա եպիսկոպոս Սեբաստիոյ, որ համարիւրր լինել յազգականութենէ Պետրոսի Գետադարձին և էր հաճոյ յաչս բազմաց կէսքէ զՅովհաննէս արքեպիսկոպոս Սըսոյ: Եւ ի ծագել մեծի տարաձայնութեան՝ հրաման ետ Լևոն արքայ ձեռնադրել զՅովհաննէս, որ և էր ընտանի թագաւորին եւ սիրելի պալատականացն, այր արքայակերպ եւ փառացի անձամբ, եւ հաւանեալ այնմ ժողովելոցն՝ կատարեցին ըստ բանի արքային: Եւ զնացեալ նստաւ Յովհաննէս յաթոռ կաթողիկոսութեան...»[1]:

Փաստորեն, Հովհաննես Սեբաստացու վկայություններից կարող ենք եզրակացնել, որ կաթողիկոսական աթոռի համար մղվող մրցակցությունը հավասար արդյունք է ունեցել և միայն Լևոն Մեծագործի միջամտության արդյունքում է հայոց կաթողիկոս ընտրվել Հովհաննես արքեպիսկոպոսը: Կարելի է համաձայնել Հովհաննես Սեբաստացու տեղե-

[1] **Յովհաննէս Սեբաստացի**, Պատմութիւն Սեբաստիոյ, Երևան, 1974, էջ 48-49:

կության հետ, քանի որ չի բացառվում, որ Լևոն Մեծագործը հաշվի առնելով նախկինում Գրիգոր Քարավեժի հետ կապված խնդիրները, փորձելու էր հայոց հայրապետական աթոռին բազմեցնել իրեն ձեռնտու թեկնածուին: Հիշյալ իրադարձությունների մասին մեզ որոշակի տեղեկություններ է հաղորդում նաև Անանուն Եդեսացին. «Այդ տարի 1514 (1203) թվականին Կիլիկիո երկրում մեռավ հայոց կաթողիկոսը, որի անունն էր Ապիրատ: Նրանից հետո գահին տիրեց Հովհաննես անունով մեկը, որը ոչ թե նրանց, այլ Կիլիկիայի իշխանների ցեղից էր, որոնք այժմ էլ կանգնած են իշխանության գլուխ»[1]: Ինչպես նկատում ենք, հեղինակը շատ մանրամասներ չի հաղորդում ընտրության մասին, այլ միայն բավարարվում է նշելով, որ կաթողիկոս ընտրվեց Հովհաննես եպիսկոպոսը: Ինչ վերաբերում է պատմիչ Սամվել Անեցու երկը շարունակողին, ապա պետք է նշել, որ նա շատ ջերմ խոսքերով է արտահայտվում Հովհաննես կաթողիկոսի մասին[2]: Եվ վերջապես այս խնդրին անդրադարձել է Սմբատ սպարապետը: Ի տարբերություն Հովհաննես Սեբաստացու, Սմբատ Սպարապետը չի խոսում կաթողիկոսական աթոռի համար թեկնածուների միջև մղվող պայքարի և հայոց արքայի միջամտության մասին, այլ միայն նշում է, որ հայոց կաթողիկոս դարձավ Սսի արքեպիսկոպոս Հովհաննեսը, որը խելացի և համեստ մարդ էր. «Եւ ի սոյն ամի ժողով արար եպիսկոպոսաց թագաւորն Լեւոն, և եդին զտէր Յոհանէս, զարքեպիսկոպոսն Սսոյ կաթողիկոս հայոց, որ էր այր խորագէտ և իմաստուն և առատաձեռն»[3]:

Հավանաբար Սմբատ Սպարապետը նույնպես կողմ է եղել Հովհաննես կաթողիկոսի աթոռակալությանը և չի ցանկացել ցույց տալ, թե վերջինս կաթողիկոսական աթոռին բազմել է ոչ թե ընտրությամբ, այլ հայոց արքայի միջամտությամբ: Միջնադարյան մյուս պատմիչների մոտ այսպիսի խնդրի շուրջ էական հաղորդումներ չկան:

Այժմ տեսնենք, թե ինչ տեսակետներ կան գիտական գրականության մեջ: Այսպես, ըստ Ե. Պետրոսյանի, քանի որ չկար հարմար թեկնածու Պահլավունիներից, նոր կաթողիկոսական աթոռին բազմում է հայոց արքայի թեկնածուն՝ Սսի Հովհաննես արքեպիսկոպոսը՝ (1203-1221)[4]: Բացի այդ, նա ավելացնում է նաև, որ այս ընտրությունը չի ընդունվում Սեբաստիայի Անանիա արքեպիսկոպոսի կողմից, որը իրեն համարում էր կաթողիկոսության հիմնական թեկնածու[5]: Այս կարևոր դեպքերի մասին խո-

---

[1] **Անանուն Եդեսացի**, Ժամանակագրություն, թարգմանություն բնագրից, առաջաբան ու ծանոթագրություններ Լ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982, էջ 193:

[2] **Սամվել Անեցի,** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 145-146:

[3] **Սմբատ Սպարապետ,** Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 213:

[4] **Ե. Պետրոսյան**,Հայ եկեղեցու պատմություն, հնագույն ժամանակներից մինչև 1441 թվականը, Երևան, 1995, էջ 137:

[5] Նույն տեղում:

սում է նաև Մ. Օրմանյանը: Նա նշում է, որ այդ պահին Պահլավունյաց տոհմում արժանի թեկնածու չկար: Այդ իսկ պատճառով իրենց թեկնածությունը դնում են մի կողմից Սեբաստիայի Անանիա եպիսկոպոսը, իսկ մյուս կողմից էլ՝ Սսի Հովհաննես արքեպիսկոպոսը[1]: Մ. Օրմանյանը ավելացնում է նաև, որ Սսի Հովհաննես արքեպիսկոպոսը բավականին մտերմացել է Լևոն Մեծագործի հետ, որը կարողանում է ապահովել Հովհաննես արքեպիսկոպոսի հաղթանակը[2]: Անվանի հայագետի տեսակետի հետ համամիտ են նաև հետազոտողներ Կ. Մութաֆյանը և Բակուրանը, ովքեր նույնպես հաստատում են, որ Հովհաննես Սսեցին կաթողիկոսական աթոռին բազմել է հայոց արքայի օգնությամբ[3]:

Ինչպես երևում է պատմիչների հաղորդումներից, և գիտական գրականության մեջ առկա տեսակետներից, հայոց կաթողիկոսի ընտրությունը կատարվել է արքայի և նրա մերձավորների միջամտությամբ:

Վերջինս նախապես եղել է Արքակաղնի և Դրազարկի վանքերի վանահայրը, այնուհետև ընտրվել մայրաքաղաք Սսի արքեպիսկոպոս:

Սկզբնական շրջանում հայոց արքայի և Հովհաննես կաթողիկոսի հարաբերությունները բավական ջերմ են եղել, որի ապացույցն է արդեն մեր կողմից նկարագրած այն աջակցությունը, որ Լևոն Մեծագործը ցույց տվեց վերջինիս նկատմամբ: Մյուս կողմից էլ՝ Հովհաննես կաթողիկոսը եղել է հայկական եկեղեցու հնավանդ սովորույթների պահպանության ջատագով:

Հայտնի է նաև, որ մայր Հայաստանի բարձրադաս հոգևորականները և հյուսիս-արևելյան Հայաստանում իրենց ինքնավար իշխանությունը հաստատած Զաքարյաններն էլ իրենց հերթին 13-րդ դարի սկզբներին սիրահոժար ճանաչում էին Լևոն Մեծագործի թագավորական իրավասությունները և ջերմ հարաբերություններ են ունեցել հայոց արքայի հետ: հարաբերություններում:

Խիստ ուշագրավ է Զաքարե Զաքարյանի կողմից մեր եկեղեցու ծիսակարգի մեջ որոշ փոփոխություններ մտցնելու հարցը: Այսպես նրանք մի շարք, հատկապես համազգային նշանակություն ունեցող հարցերում, դիմում էին նրա գերագույն վճռին[4]: Կիլիկիայի թագավորության հռչակումից մի քանի տարի անց Հյուսիսային Հայաստանի իշխանապետ Զաքարե ամիրսպասալարը իր խոստովանահայր Մխիթար Գոշի խորհրդով

---

[1] **Մ. Օրմանյան,** Ազգապատում, Ս. Էջմիածին, 2001, սյուն 1823-1824:

[2] Նույն տեղում:

[3] **Կ. Մութաֆյան,** Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001 էջ 405, Բակուրան, Մի տեսութիւն Կիլիկիոյ հայկական իշխանութեան վրայ, Պէյրութ, 1958, էջ 83:

[4] **Հ. Արշամյան**, Կիլիկիայում վերակերտված հայոց թագավորության համազգային իրավասությունը, Բանբեր Երևանի համալսարանի, 1995, N 3, էջ 59:

հատուկ դեսպանությամբ նամակ է ուղարկում Ամենայն Հայոց Կաթողիկոսին և հայոց թագավորին՝ խնդրելով թույլ տալ իրեն ռազմական արշավանքներ ժամանակ վրացիների նմանությամբ գործածել պատարագի շարժական սեղան, ինչպես նաև մեր եկեղեցու ծիսակարգում մտցնել որոշ փոփոխություններ, որոնց շնորհիվ իբր կմեղմանային հայ-վրացական եկեղեցական տարաձայնությունները։ Հայոց արքայի նախաձեռնությամբ Կիլիկիայի մայրաքաղաքում հրավիրվեց եպիսկոպոսների ժողով, որտեղ քննարկեցին արծարծվող խնդիրը։ Այդ ժողովը քննարկվեց թե Զաքարե ամիրսպասալարի բարձրացրած խնդիրը, և թե այլ կարևոր կրոնաեկեղեցական ու քաղաքական հարցեր։ Ու թեև միջնադարյան սկզբնաղբյուրներում շատ քիչ տեղեկություններ են պահպանվել վերը նշված ժողովի և նրանում ընդունած որոշումների վերաբերյալ, այնուամենայնիվ Կիրակոս Գանձակեցու տեղեկություններից պարզ է դառնում, որ հիշյալ ժողովը բավարարել է Զաքարեի խնդրանքը և հետևյալ որոշումը կայացրել.

1. Պատարագը մատուցել դպիրի և սարկավագի սպասավորությամբ,
2. Սուրբ Աստվածածնի ավետյաց տոնը տոնել ապրիլի 6-ին, շաբաթվա ինչ օր որ պատահի, իսկ նրա փոխման տոնը օգոստոսի 15-ին, ինչ օր որ ընկնի, Սուրբ խաչի տոնը սեպտեմբեր ամսի 14-ին, ինչ օր որ համընկնի,
3. Սուրբ հայտնության և Զատկի ճրագալույցի պասը պահել մինչև երեկո և ոչ մի բանով չլուծել, բայց միայն ձկով ու ձեթով,
4. Ընդունել Փրկչի ու բոլոր սրբերի պատկերների նկարահանությունը ու չմերժել դրանք իբրև հեթանոսական պատկերներ,
5. Պատարագ մատուցել նաև ողջերի համար,
6. Կրոնավորները միս չպետք է ուտեն,
7. Ձեռնադրել դպիր, ապա շատ օրեր հետո՝ սարկավագ, իսկ ապա չափահաս ժամանակ՝ քահանա,
8. Միաբան մնալ վանքերում ու սեփական իրեր չստանալ։

Բացի այդ կաթողիկոսը Զաքարեին է ուղարկում գմբեթարդ եկեղեցաձև վրան, մարմարյա շարժական սեղան և պատարագի սպասքեղեն։

Փաստորեն այս ժողովում հայոց արքայի և կաթողիկոսի ուղարկած պատասխանները վկայում են, որ նրանք ձգտել են ամրացնել բարեկամական կապերը Զաքարյանների՝ Հյուսիսային Հայաստանի այդ ազդեցիկ իշխանական ընտանիքի հետ։ Եվ հայոց արքայի եկեղեցական քաղաքականությունը հավանություն է տվել ըստ երևույթին նաև նրա համար, որ դա կարող էր ավելի ամրացնել հայ ու վրաց ազնվականության ռազմական ու քաղաքական համագործակցությունը և նպաստել Փոքր Ասիայի

սելջուկների դեմ վրաց պետության և Կիլիկյան Հայաստանի ընդհանուր պայքարին։

Զաքարեն ստանալով Սսի վերոնշյալ ժողովի որոշումները շատ ուրախացավ, բայց դրանք բուն Հայաստանում արևելյան վարդապետների կողմից հանդիպեցին մեծ ընդդիմության, որի գլուխ Սանահնի, Հաղպատի նշանավոր վանքերի հոգևորականներն էին՝ Դավիթ Քոբայրեցու և Գրիգոր Տուտեորդու գլխավորությամբ։ Այս նորամուծությունները կիրառելու համար Զաքարեն հարկադրված եղավ իրար հետևից գումարել երեք ժողով՝ Լոռեի, Անիի և Գետականի, բայց այդպես էլ չկարողացավ իր զորեղ կամքը պարտադրել ավանդապաշտ արևելյան վարդապետներին ու վերոհիշյալ դրույթները գործածել Հայաստանի եկեղեցիներում։ Միայն բավարարվեց դրանց մի մասը լոկ բանակում գործածելով։

Ինչպես արդեն նշել ենք, սկզբնական շրջանում արքայի և Հովհաննես կաթողիկոսի հարաբերությունները բավական ջերմ էին, սակայն որոշ ժամանակ անց բարդանում են։ Պատճառը Լևոն Մեծագործի կողմից Հովհաննես Սսեցու ազգականների՝ Կոստանդին Կամարտիաս իշխանի և նրա որդիների՝ Ճոսլինի և Պաղտինի բանտարկությունն էր[1]։

Պատմիչ Վարդան Արևելցին նշում է, որ Հովհաննես կաթողիկոսը ապստամբել էր հայոց արքայի դեմ, և դրանից վշտանալով, հայոց արքան նոր կաթողիկոս է նշանակում Տեր Դավիթ Արքակաղնեցուն. « Եւ ապա տէր Յոհաննէս որ կայր ապստամբ ի Լևոնէ, յորմէ վշտացեալ թագաւորին Լևոնի՝ դնէ կաթողիկոս զտէր Դաւիթ Արքակաղնին»[2]։ Թեև պատմիչը արձանագրել է հայոց արքայի և կաթողիկոսի հակամարտությունը, սակայն որևէ խոսք չի ասում դրա պատճառների մասին, ինչպես նաև, թե որ թվականին է տեղի ունեցել այդ դեպքը։ Իսկ որն էր այն իրական պատճառը, որով պայմանավորված հայոց կաթողիկոսը կարող էր դեմ դուրս գալ մի անձնավորության, ով որոշ ժամանակ առաջ աջակցել էր իրեն՝ բազմելու հայրապետական գահին։ Եվ հետաքրքիրն այստեղ այն է, որ ի տարբերություն Գրիգոր Ե Քարավեժի ժամանակաշրջանի, այս անգամ դավանաբանության հետ կապված որևէ խնդիր չկար։ Վերը նշված դեպքի մասին խոսում է նաև Հեթում Կոռիկոսցին, ով գրեթե կրկնելով Վարդան Արևելցուն, ավելացնում է նաև, որ այդ դեպքը տեղի է ունեցել 1207 թվականին[3]։ Նշյալ իրադարձության մասին ամենից խորությամբ անդրադարձել է Սմբատ Սպարապետը։ Ըստ նրա՝ մոտավորապես 1207 թ. անհայտ պատճառով արքայի հրամանով բանտարկում են հայոց կաթողիկոսի ազ-

[1] **Վարդան Արևելցի,** Տիեզերական պատմություն, Վենետիկ, 1862, էջ 141, Սմբատ Սպարապետ,։էջ 215։

[2] **Վարդան Արևելցի,** էջ 141։

[3] Հեթում պատմիչ, Թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 81։

գականներին, որի պատճառով էլ Լևոն Մեծագործի և կաթողիկոս Հովհաննեսի միջև վեճ է սկսվում[1]: Վեճն այն աստիճանի է բարդանում, որ հայոց արքան և իշխանները հրաժարվում են ճանաչել Հովհաննեսին՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի, և առաջ են քաշում նոր կաթողիկոսի՝ Մամեստիայի արքեպիսկոպոս Դավթի թեկնածությունը. «Իսկ ի թուին ՈԾԶ 656-1207 թագաւորն Լեւոն յաղագս պատճառի ինչ իրք կալաւ զսեւաստոիսն Հեռի, և զորդիս նորա զԿոստանց Կումարտիասնն Ճօսլին և զՊաղտինն և եդ ի կապանս և ի բանտի: Եւ հեռի փեսայ էր տէր Յոհանիսի կաթողիկոսին հայոց…և յայսմանէ եղեւ խռովութիւն ընդ թագաւորն Լեւոն և ընդ կաթողիկոսն տէր Յոհանէս, և այնքան մեծացավ ատելութիւն ի մեջ նոցա՝ մինչ զի ի բաց ներժեաց զնա թագաւորն և առաջնորդքն և իշխանքն Կիլիկեցւոց. և եդին հակառակ նմա զաքեպիսկոպոսն Մասայ և առաջնորդ Արքակաղնւոյն զտէր Դաւիթ կաթողիկոս հայոց»[2]: Մյուս պատմիչների մոտ էական տեղեկություններ չկան մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ:

Այժմ տեսնենք, թե ինչ տեսակետներ կան գիտական գրականության մեջ:

Այսպես, հետազոտող Ա. Սուքիասյանը կարծիք է հայտնում, որ կաթողիկոսը «խռովարար» է և մի շարք հարցերում չի համաձայնվում թագավորի հետ, ուստի և արքան չի ճանաչում հայոց կաթողիկոսի իշխանությունը[3]: Ցավոք, հետազոտողը հստակ չի նշում, թե որոնք էին այն պատճառները, որ լուրջ տարաձայնությունների առիթ են տվել: Հետազոտող Բակուրանը ավելացնում է, որ բացի սկսված տարաձայնություններից՝ Լևոն Մեծագործի և Հովհաննես կաթողիկոսի միջև ավելացավ նաև այն, որ արքայի հրամանով շուտով կաթողիկոսի ազգականներին բանտարկեցին[4]:

Բակուրանը խոսում է կաթողիկոսի ազգականների բանտարկության մասին, սակայն չի նշում դրանց պատճառները: Անհամաձայնությունները վերածվում են ատելության և «ապստամբ կաթողիկոսն» արդեն Հռոմկլայի դղյակն ամրացնելով՝ բացարձակորեն կանգնում է հայոց արքայի դեմ[5]: Եվ հավանաբար դա էր պատճառը, որ Լևոն Մեծագործը որոշում կայացրեց այլևս չճանաչել նրան որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

---

[1] **Մմբատ Սպարապետ**, էջ 215:

[2] Նույն տեղում:

[3] **Ա.Սուքիասյան,** Պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 65:

[4] **Բակուրան,** Մի տեսութիւն Կիլիկիայի հայկական իշխանութեան վրայ, Պէյրութ, 1959, էջ 83:

[5] Նույն տեղում:

Փաստորեն արտառոց իրավիճակ է ստեղծվում պետության և եկեղեցու հարաբերություններում: Ստեղծված պայմաններում Հռոմկլայի կաթողիկոսարանի և Կիլիկիայի հայկական թագավորության միջև կապը մի որոշակի ժամանակաշրջան խզվում է:

Ինչպես նկատում ենք, Լևոն Մեծագործի կառավարման ժամանակաշրջանում սա արդեն երկրորդ դեպքն էր, երբ վերջինս լուրջ ընդհարում էր ունենում հայոց եկեղեցու ղեկավարի հետ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կաթողիկոսական աթոռը գտնվում էր Կիլիկիայի հայկական թագավորության սահմաններից դուրս՝ Հռոմկլայում, հայոց արքան ընտրում է նոր կաթողիկոս Դավիթ Գին, ով Մամեստիայի արքեպիսկոպոսն էր[1]: Արդյոք կարելի է այս որոշումը համարել օրինական: Հավանաբար ոչ, քանի որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պետք է ընտրվեր բոլոր թեմերի առաջնորդների կողմից և հաստատվեր եկեղեցական չորս կարևոր կենտրոնների կողմից, ինչի մասին համենայն դեպս պատմական աղբյուրներում չի պահպանվել որևէ տեղեկություն: Բացի այդ կենդանի էր Հովհաննես կաթողիկոսը:

Դավիթ Արքակաղնեցին միառժամանակ սկսում է կառավարել Կիլիկիայի եկեղեցին:

Ինչ վերաբերում է Հովհաննես կաթողիկոսին, ով ժամանակին Լևոն Մեծագործի հրամանով բերման էր ենթարկում հայոց կաթողիկոս Գրիգոր Ե Քարավեժին, այժմ ինքն է հայտնվում լուրջ խնդիրների մեջ: Դավիթ Գ-ի նստավայր է դարձնում մայրաքաղաք Սիսը: Ուսումնասիրողներից Հ. Տեր-Ղազարյանը մի տեսակետ է հայտնում, համաձայն որի Դավիթ Արքակաղնեցին իբրև կաթողիկոս կառավարեց շուրջ վեց տարի[2]: Մյուս հետազոտողների մոտ նոր տեսակետներ չենք գտնում: Դավիթ Արքակաղնեցու կառավարման ժամանակաշրջանի մասին միջնադարյան սկզբնաղբյուրներում բավարար տեղեկություններ չեն պահպանվել, բայց ամենայն հավանականությամբ վերջինս համերաշխ է եղել հայոց արքայի հետ և աջակցել է վերջինիս պետական-քաղաքական կառավարման գործերում:

Այսպիսով ուսումնասիրելով միջնադարյան սկզբնաղբյուրների տեղեկությունները, ինչպես նաև ժամանակակից գիտական գրականության մեջ եղած տեսակետները, գալիս ենք այն տեսակետին, որ հայոց արքայի և Հովհաննես կաթողիկոսի հարաբերությունների թշնամացման պատճառ է հանդիսացել հիմնականում այն հանգամանքը, որ Լևոն Մեծագոր-

[1] **Ե.Պետրոսյան,** նշվ. աշխ., էջ 138, Մ. Օրմանյան, նշվ. աշխ., այուն 1834, Կ. Մութաֆյան, նշվ. աշխ., էջ 405:

[2] **Հ. Տեր-Ղազարյան,** Հայկական Կիլիկիա, Տեղագրութիւն, Լիբանան, 1966, էջ 274:

ծը ձերբակալում է կաթողիկոսի ազգականներին՝ կասկածելով նրանց որոշ ապօրինությունների և դավաճանության մեջ:

Հովհաննես կաթողիկոսը, համոզված լինելով, որ իր ազգականները անմեղ են, պահանջում է հայոց արքայից ազատ արձակել նրանց: Արքան, չի համաձայնում և մերժում է կաթողիկոսի միջնորդությունը: Դրանից հետո կաթողիկոսը զայրանում է, քաշվում Հռոմկլայի կաթողիկոսարանը և այլևս չի ցանկանում Լևոն Մեծագործի հետ համագործակցել: Չի բացառվում նաև, որ կաթողիկոս Հովհաննես Սսեցին այլ դժգոհություն ևս ունենար Լևոն Մեծագործի վարած քաղաքականության որ հարցերի շուրջ:

Հայոց կաթողիկոսի դիրքորոշումը չի վհատեցնում Լևոն Մեծագործին: Նա շարունակում է բանտարկության մեջ պահել կաթողիկոսի ազգականներին: Դրանից հետո Հովհաննես կաթողիկոսի կենդանության օրոք Սիս քաղաքում նշանակում է նոր կաթողիկոս՝ Դավիթ Գ Արքակաղնեցուն[1], ում փաստացի տրված էր միայն Կիլիկիայի հայկական թագավորության տարածքում եկեղեցիների ղեկավարման իրավունքը: Ինչ վերաբերում է Հովհաննես կաթողիկոսին, ապա պետք է նշել, որ հայոց հայրապետը միաժամանակ մնում է իր նստավայրում՝ Հռոմկլայի բերդաքաղաքում և շարունակում իր աթոռակալությունը փոքրիկ տարածքում: Նման իրավիճակը շարունակվեց մի քանի տարի, մինչ Դավիթ Արքակաղնեցու մահը:

Դավիթ Արքակաղնեցու մահից հետո Լևոն Մեծագործը որոշում է նոր կաթողիկոսի ընտրություն չանցկացնել: Շատ հավանական է, որ Հովհաննես Զ-ն և հայոց թագավորը հաշտվել էին:

Այսպես, 13-18-րդ դարերի մանր ժամանակագիրներից մեկը մեզ տեղեկացնում է, որ 1211 թ. Դավիթ Արքակաղնեցու մահից հետո կաթողիկոսական աթոռը կրկին տրվում է Հովհաննեսին. «ՈԿ 1211 վաղջանեցաւ տէր Դավիթ և դարձեալ եղև կաթողիկոս Հայոց տէր Յովանէսն»[2]: Վերը նշված դեպքի մասին առավել մանրամասն խոսում է նաև Սմբատ Սպարապետը: Վերջինս նշում է, որ Դավիթ Արքակաղնեցու մահից հետո Դրազարկի վանահայր Հեթումը գնում է Հռոմկլա՝ Հովհաննեսի մոտ, և համոզում նրան հաշտվել հայոց արքայի հետ[3]: Չի բացառվում նաև, որ Հեթումի կատարած քայլի նախաձեռնողը եղած լիներ Լևոն Մեծագործը, ով, հավանաբար, ցանկանում էր հաշտվել կաթողիկոսի հետ:

---

[1] **Սմբատ Սպարապետ,** Պատմություն, Մոսկուա, 1856, էջ 110: Այդ մասին տես նաև՝ **Մ. Օրմանյան,** նշվ. աշխ., սյուն 1835, **Ա.Սուքիասյան,** նշվ. աշխ., էջ 65, **Հ. Տեր-Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 274, **Ե. Պետրոսյան,** նշվ. աշխ., էջ 138:

[2] Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, հ. Ա, Երևան, 1951, էջ 78:

[3] **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, էջ 217-218:

Ի տարբերություն 13-18-րդ դարերի մանր ժամանակագիրների հաղորդած տեղեկության, Սմբատ պատմիչը կաթողիկոս Հովհաննեսի և հայոց արքայի միջև հաշտությունը դնում է 1212 թվականով[1]: Այն, իրոք, կարող էր այդպես լինել: Եթե վստահենք այն տեղեկությանը, որ Դավիթ Արքակաղնեցին մահանում է 1211 թվականին, ապա մի որոշ ժամանակ՝ անց նրա թաղումից, տեղի է ունենում բանակցային գործընթացը: Դա նույնպես կարող էր որոշակի ժամանակաշրջան տևել և դրանից հետո տեղի ունենալ հաշտեցումը:

Ի վերջո, Լևոն Մեծագործը և կաթողիկոս Հովհաննես Զ Սսեցին հաշտվում են: Շուտով հայոց արքան բանտից ազատում է Հովհաննես Զ կաթողիկոսի ազգականներին[2]: Նրանց հաշտությունից հետո հայոց արքայի հրամանով կաթողիկոսից բռնազավթած գյուղերը և հողային տարածքները հետ են վերադարձվում նրա օրինական տիրոջը:

1218 թ. հայոց կաթողիկոս Հովհաննեսը տեղափոխվում է մայրաքաղաք Սիս, իսկ հետագայում նրանց հարաբերություններն այնքան են ջերմանում, որ կաթողիկոսը դառնում է Լևոն Մեծագործի մանկահասակ դստեր՝ Զաբելի երեք խնամակալներից մեկը: Բացի այդ, քանի որ մոտավորապես 1218 թվականին մահացել էր Հեթում-Հեղին, ով Դրազարկի վանահայրն էր, հայոց արքայի կարգադրությամբ Դրազարկը նույնպես հանձնվում է հայոց կաթողիկոս Հովհաննեսի տնօրինությանը[3]:

Փաստորեն Լևոն Մեծագործը իր կյանքի վերջին տարիներին ամբողջովին կարգավորեց իր հարաբերությունները հայոց կաթողիկոսի հետ:

Арам Оганесян, Из истории взаимоотношений Левона Великого и Ованнеса VI Ссеци (1203-1219 гг.) - Работа посвящена исследованию истории взаимоотношений основателя Киликийской Армении короля Левона Великого и Ованнеса Ссеци. В начале рассматриваются обстоятельства, при которых Ованнес был избран католикисом. Далее касаемся Церковного Собора Сиса и решению, которое было принято католикосом относительно Захарии амирспасалара.

В завершении работы представлен конфликт, возникший между армянским королем и католикосом Ованнесом, разделение католикосского престола и их примирение.

[1] Նույն տեղում, էջ 218:

[2] Նույն տեղում:

[3] **Հ. Արշաման,** Կիլիկյան Հայաստանի բերդատեր իշխանները 12-րդ դարի վերջերին և 13-րդ դարի սկզբին, Բանբեր Երևանի համալսարանի, 1994, 3, էջ 59:

Aram Hovhannisyan, From the history of relationships between Levon Metsagorts and Hovhannes Ssetsi (1203-1219) - The article deals with the history of the relationships between King Levon Metsagorts and Hovhannes Ssetsi. Firstly we have revealed and have given the circumstances under which Hovhannes Bishop was elected as Catholikos. Then we have mentioned both the Church council held in Sis and the decision that was given to Zaqareh Amirspasalar/commander by the Catholikos himself.

The article ends in statements on the controversy that aroused between King Levon and Catholikos Hovhannes, as well as the reconciliation between them.